

## ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԶԱՏԱԿԱՆՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԱՐԵՒՄՏԱԿԱՅ ԱԻՏՏԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԵԼԻՄԵԱՆ

Ամերիկեան բողոքական հրատարակություններու՝ «Շտեմարան պիտանի գիտելաց» (Զմիռնիա, 1839-1854), «Աւետաբեր» (Կ. Պոլիս, 1855-1915), «Աւետաբեր մանկանց» (Կ. Պոլիս, 1908-1915) եւ այլ պարբերականներու դասանական ուղղութիւնները կրթութեան, դաստիարակութեան ու լեզուի ասպարէզներու մէջ նպատակ ունէր ազգը տանելու փրկութեան ու կատարելագործման ճանապարհով: Ազգային կրթութիւն ըսելով՝ «Աւետաբեր Շտեմարան...»-ը զայն կ'ընկալէ ոչ միայն բուն իմաստով, այսինքն՝ ազգային ասանդներու վրայ հիմնուած կրթութիւնը, այլեւ համազգային, համաժողովրդական, ժամանակակից հասկացութեամբ՝ զանգուածային կրթութիւնը, որովհետեւ անհատ անձերու կրթութիւնը որքան ալ որ անհրաժեշտ, բայց բաւարար չէ, որպէսզի ազգը հասնի ընդհանուր բարեկեցութեան: Աստուածաբանները տնտեսական խնդիրներու նկատմամբ եւս ունէին իրենց դիրքորոշումը՝ նիւթական բարիքներէն օգտուելուն տալով միմիայն բարոյական գնահատական:

**Քանայի բաներ** – մշակոյթ, կրօն, Աւետարանական եկեղեցի, ազգային ինքնագիտակցութիւն, ազգային կրթութիւն, «Աւետաբեր» պարբերաթերթ:

XIX դարու փիլիսոփայական երկերու մէջ գերիշխող կարծիք էր, թէ արդիւնաբերական աճին զուգընթաց պիտի նուազի կրօնին դերը (Գառլ Մարքս, Զիկմունտ Ֆրոյտ, Մաքս Վեբեր, Էմիլ Դիւրկեհայմ): Կրօնի դերի տկարացումին գլխաւոր գործիքը աշխարհականացումն է: Բայց. «...*փարբեր կրօնական ուղղութիւններու ներկայացուցիչներ, կրօնական համոզմունքներու թուլացումին հետ, կը սկսին առաւել հանդուրժողական վերաբերուիլ այլ կրօնական ուղղութիւններու ներկայացուցիչներուն՝ հիմնուելով կասկածամիտ մօտեցումներու վրայ*»:

Նոյնիսկ եթէ եկեղեցականներ այդպէս չէին խորհիր, այնուամենայնիւ, հարկադրուած էին հաւատացեալ հոգիներու հետ հաղորդակցուելու նոր ուղիներ ու եղանակներ փնտռել: Միւս կողմէն՝ հասարակական յարաբերութիւններու մէջ կրօնի կազմակերպիչ գործառոյթի թուլացումին զուգընթաց՝ համարժէք իշխանութիւն ունենալու պահանջը եւրոպացի մտածողներուն կը յանգեցնէ այն միտքին, թէ հարկաւոր է յոյսը դնել մարդկային բանականութեան առասպելաբանական զօրութեան վրայ, որ իր կարգին առաւել կարեւոր դարձուց գիտութեան զարգացումին պահանջքը, մանաւանդ որ այլընտրանքները շատ

<sup>1</sup> Berger P. The social reality of religion. London, 1967, p. 152.

չէին: Սկսած XVII-XVIII դարերէն՝ երոպական մարդասիրական ու գիտական միտքը կրթութիւնը այլ կերպ չէր պատկերացներ, քան մարդու բազմակողմանի զարգացում, «ազատ արուեստներու» եւ դասական լեզուներու իմացութիւն՝ ենթադրելով, որ «բառերը շատ աւելի վաղ կ'իրացուին, քան գաղափարները»<sup>2</sup>:

Ոմանք կը կարծէին, թէ հասարակական կեանքի վերածնունդը հարկաւոր է կապել արուեստի ու մշակոյթի հետ: Այդպէս մտածողներէն Ֆ. Շիլլերը կը կարծէր, թէ արուեստը կրնայ փոխարինել ճգնաժամ ապրող կրօնին եւ գործել որպէս ընկերութիւնը համախմբող ուժ, եթէ ընկալուի որպէս «հաղորդակցման ձեւ» ու եռանդուն դեր ստանձնէ մարդոց միջանձնային յարաբերութիւններու մէջ, որով եւ մասնակից կը դառնայ մարդկային ստեղծագործութեան մեծագոյնի՝ «ճշմարիտ քաղաքական ազատութեան» արարումին<sup>3</sup>: Հակառակ պարագային, ինչպէս կը կարծէր Հեկելը, կրօնական գիտակցութեան ճգնաժամի խորացումը կրնար յանգեցնել անոր, որ. «*եթէ աղքատներուն այլեւս Աւետարան չեն քարոզեր, եթէ աղը կորսնցուցեր է համը, եւ լուրջամբ կ'ոչնչացուին բոլոր պատուարները, ապա ժողովուրդը, որուն անճկուն բանականութիւնը ի զօրու է ճշմարտութիւնը ընկալել միայն որպէս պատկերացում, այլեւս անկարող կ'ըլլայ բաւարարելու իր ներաշխարհի ձգտումները*»<sup>4</sup>:

Բարեփոխութեան (Reformation) շարժումին համար ընդհանուր հետեւեալ գաղափարները կային՝ Սուրբ Գիրքը որպէս ճշմարտութեան միակ աղբիւր ընդունելը. «...*կաթոլիկ եկեղեցու Սրբազան ասանդութեան ժխտումը, եկեղեցու եւ հոգեւորականութեան՝ իբրեւ մարդու եւ Աստուծոյ միջև միջնորդների դերի մերժումը, եկեղեցական կարգի պարզեցումն ու ժողովրդավարացումն*»<sup>5</sup>: Ասոր հետեւանքով երոպական կարգ մը պետութիւններու մէջ քաղաքական իշխանութիւնը աստիճանաբար անցաւ աշխարհիկ ուժերուն ձեռքը:

Բարեփոխութեան գաղափարախօսութիւնը մշակեցին կրօնական գործիչներ, աստուածաբաններ Մարտին Լիւթերը (1483-1546) եւ Ժան Կալվինը (1509-1564): Լիւթերականութեան մէջ ձեւակերպուած են բողոքականութեան հիմնական սկզբունքները՝ «միայն հաւատով», առանց հոգեւորականութեան եւ

<sup>2</sup> Моль А. Социодинамика культуры. Москва, 1973, стр. 37.

<sup>3</sup> Ст'ю Шиллер Ф. Собр. соч. Т. 6. Москва, 1957, стр. 253.

<sup>4</sup> Гегель Г.В.Ф. Философия религии. Т. 2. Москва, 1975, стр. 333.

<sup>5</sup> Միրումեան Կ., Քաղաքական ուսմունքների պատմութիւն, Երևան, 2006, էջ 306:

Եկեղեցւոյ միջնորդութեան Աստուծոյ հաղորդակցուելով փրկուելու գաղափարը<sup>6</sup>:

Լիւթերի ու Կալվինի վարդապետութեան հիմնական միտքն է, թէ մարդը փրկութեան կրնայ հասնիլ միայն հաւատի միջոցով: «Բարի գործերը սուկ հաւատի պտուղներն ու դրսեւորումներն են... Լիւթերը բանականութիւնը համարում է հաւատքի ճանապարհին կանգնած գլխաւոր խոչընդոտը: Քանի որ բանականութիւնն անզօր է ճանաչելու Աստծուն, ուստի հաւատացեալի համար ոչ մի արժէք չունի ռացիոնալ աստուածաբանութիւնը կամ սխոլաստիկական փիլիսոփայութիւնը»<sup>7</sup>, -կը նկատէ փիլիսոփան:

Լիւթերի 95 թեզիսները (հետագային (1517 թ.) եղան քրիստոնէական ուսմունքի նոր մեկնաբանութեան՝ բողոքական վարդապետութեան հիմքը) կը նշանաւորեն Բարեփոխութեան սկզբնաւորումը<sup>8</sup>: Լիւթեր առաջինը Աստուածաշունչ մատենանը լատիներէնէն թարգմանեց գերմաներէնի: Ան կը պնդէր, թէ Սուրբ Գիրքը պիտի կարդան բոլորը: Ըստ Մարտին Լիւթերի՝ հոգեւոր փրկութիւնը հնարաւոր է միայն հաւատի միջոցով: Մարդոցմէ ոչ ոք առաւելութիւն ունի ոեւէ մէկու նկատմամբ, բոլոր խաւերը հաւասար են: Աշխարհիկը հնարաւորութիւն կու տայ «տեսնել, ճանչնալ, գնահատել, դատել, պատժել», մինչդեռ մնացած պարագաներուն գերիշխողը հոգեւոր կառավարումն է: Աշխարհիկ կառավարումը իրաւունք չունի խառնուելու հոգեւոր կառավարումին, քանի որ հոն իշխողը «Աստուծոյ խօսքն է»: Այս եպիսկոպոսներու գործն է եւ ոչ թէ իշխաններու: Աւելին, աշխարհիկ կառավարումի մէջ կարեւոր կը համարուի բռնութեամբ չառաջնորդուիլը, քանի որ «անիրաւութիւնը ամենէն առաջ պէտք է իրաւունքով յաղթահարել: Հնագոյն ձեւով՝ հոգեւոր ծառայութիւն իրականացնողը պէտք չէ ուժ գործադրէ: Ան նախ պէտք է կառավարէ օրէնքով»<sup>9</sup>:

Լիւթերը որչափ աւելի կը խորանար աշխարհիկ գործերու մէջ, այդչափ աւելի բարձր կը գնահատէր մասնագիտական գործունէութեան նշանակութիւնը: Նոյն ատեն իւրաքանչիւր մարդու որոշակի մասնագիտութիւնը անոր

<sup>6</sup> Ի տարբերութիւն Լիւթերի՝ Կալվինը կը քարոզէր «աշխարհիկ ասկետիզմ»՝ պահանջելով հրաժարիլ երկրային հաճոյքներէն, զուարճութիւններէն եւ խստօրէն հետեւիլ կրօնական բարոյականութեան պատուիրաններուն /տե՛ս Мартин Лютер-реформатор, проповедник, педагог /Сост. Кох В., Курило О./ . Москва, стр. 38).

<sup>7</sup> **Ջաբարյան Ս. Ա.**, Փիլիսոփայութեան պատմութիւն (պատ. խմբ.՝ պրոֆ. Հ.Ղ. Միրզոյեան), Երևան, 2000, էջ 175, 176:

<sup>8</sup> **Соколов В. В.** Европейская философия XV-XVIII веков. Москва, 1984, стр. 109 -110.

<sup>9</sup> Энциклопедический словарь Брокгауза и Ефрона в 86 т. (82 т. и 4 доп.). Санкт-Петербург, 1890—1907.

համար կը դառնայ աստուածային կամքի անմիջական արտայայտումը: Աստուծոյ պատգամով իւրաքանչիւրը կը կատարէ իր պարտքը յատկապէս այն դիրքին մէջ, ուր կը գտնուի նախախնամութեան կամքով: Իսկ երբ «մոլեռանդներու» եւ գիւղացիական յուզումներէն ետք հաստատուած պատմական առարկայական կարգը, ուր իւրաքանչիւրը կը գրաւէ Աստուծմէ իրեն յատկացուած տեղը, Լիւթերի համար կը դառնայ աստուածային կամքի ուղղակի էմանացիա<sup>10\*</sup>, նախախնամութեան սկզբի անվի վճռական շեշտադրումը կեանքի որոշակի իրավիճակներու մէջ Լիւթերին կը յանգեցնէ զուտ աւանդապատական երանգի «հնազանդութեան» գաղափարին. իւրաքանչիւրը պէտք է մնայ այն կոչմանը ու վիճակին, որոնք տրուած են Աստուծմէ, եւ իրագործէ իր երկրային մտադրութիւնները՝ ընկերութեան մէջ իրեն յատկացուած դիրքի ծիրէն ներս:

Եթէ սկզբնապէս Լիւթերի տնտեսական աւանդապատութիւնը արդիւնք էր Պօղոս առաքելի ոգիով անտարբերութեան, ապա հետագային այն կը պայմանաւորուի նախախնամութեան նկատմամբ աճող հաւատով. հաւատ, որ կ'ենթադրէր անվերապահ ենթարկում աստուածային կամքին՝ աշխարհիկ կեանքին մէջ սեփական դիրքի անվերապահ ընդունումով: Լիւթերը ընդհանրապէս չէ ստեղծած որեւէ սկզբունքորէն նոր կամ սկզբունքորէն այլ հիմք, որու վրայ կը կառուցուէր մասնագիտական գործունէութեան համադրութիւնը կրօնական սկզբունքներու հետ: Իսկ համոզմունքը, որ դաւանաբանութեան մաքրութիւնը եկեղեցոյ անկեղծութեան միակ անսխալական չափանիշն է, եւ որուն ան XVI դարու 20-ական թուականներու բռուն իրադարձութիւններէն ետք անվի համոզուեցաւ, ինքնին կը խոչընդոտէր բարոյագիտական ինչ-ինչ նոր հայեցակէտերու առաջացումը:

Բողոքականութեան դաւանաբանութիւնը կրնայ արտայայտուիլ հինգ դրոյթներու միջոցով.

**1. Sola Scriptura - միայն Սուրբ Գիրքը՝** Հին եւ Նոր Կտակարաններու մարգարէական եւ առաքելական գրքերն են:

**2. Sola fide - միայն հաւատով՝** այս ուսուցում է այն մասին, որ արդարանալ հնարաւոր է միայն հաւատով, անկախ բարի գործեր կատարելէն ու ունել արտաքին հոգետր գործունէութենէն: Բողոքականները չեն արժեզրկեր բարի գործերը, սակայն կը ժխտեն անոնց նշանակութիւնը որպէս հոգիի փրկութեան աղբիւր կամ պայման:

<sup>10\*</sup> Բխում, ճառագայթում, արտահոսում:

**3. Sola gratia -միայն շնորհով՝** այս վարդապետութիւն է այն մասին, որ փրկութիւնը շնորհ է, այսինքն՝ Աստուծոյ կողմէն մարդուն տրուած ճրի պարգեւ: Մարդը չի կրնար վաստակիլ փրկութիւնը կամ նոյնիսկ որեւէ ձեւով մասնակցիլ իր փրկութեան: Թէեւ մարդը իր հաւատով կ'ընդունի աստուածային փրկութիւնը, սակայն մարդու փրկութեան համար ամբողջ փառքը միայն Աստուծոյ է:

**4. Solus Christus – միայն Քրիստոսը՝** բողոքականութեան տեսակէտով Քրիստոս միակ միջնորդն է Հայր Աստուծոյ ու մարդու միջեւ, եւ փրկութիւնը հնարատր է միայն առ Քրիստոս հաւատի միջոցով: Բողոքականները ասանդաբար կը հերքեն փրկութեան գործին մէջ կոյս Մարիամի եւ միա սուրբերու միջնորդութիւնը: Նաեւ կը պնդեն, որ եկեղեցական կառոյցը (նւիրապետութիւնը) նոյնպէս չի կրնար միջնորդ ըլլալ Աստուծոյ ու մարդոց միջեւ:

**5. Soli Deo gloria -փառքը միայն Աստուծոյ է՝** այս վարդապետութիւն է այն մասին, որ մարդ պէտք է մեծարէ ու երկրպագէ միայն Աստուծոյ, քանի որ փրկութիւնը կը շնորհուի միայն Անոր կամքով: Ոչ ոք իրաւունք ունի յաւակնելու Աստուծոյ հաւասար փառքի ու մեծարանքի:

Այսպիսով, բողոքականութիւնը որպէս հաւատի միակ հիմք կ'ընդունի Աստուածաշունչը: Աստուածաշունչ կարդալը, ուսումնասիրելը եւ սեփական կեանքին մէջ կիրառելը իւրաքանչիւր հաւատացեալի կարեւորագոյն պարտատրութիւնն է: Ի տարբերութիւն կաթոլիկ, ուղղափառ եւ այլ ասանդական եկեղեցիներու՝ բողոքականութիւնը որպէս հաւատի հիմք չ'ընդունիր Սրբազան ասանդոյթը: Կարգ մը ուղղութիւններ կտրականապէս կը հերքեն զայն, ուրիշներ կը վերաբերին յարգանքով, սակայն վերապահումով: Սրբազան ասանդոյթի նկատմամբ դրական վերաբերմունք թոյլատրելի է միայն եւ միմիայն այն պարագային, եթե ան կը բխի **Սուրբ Գրքէն** ու չի հակասեր անոր: Ոչ թէ ծիսական պաշտամունքի պարզեցումը կամ արժեզրկումը, այլ միայն այս վերապահումը պատճառ է, որ բազմաթիւ բողոքական եկեղեցիներ իսպառ կը հրաժարին Սրբազան ասանդոյթէն, ձէսերէն ու արարողակարգերէն:

Հայ աւետարանական եկեղեցին վերջապէս կազմակերպուեցաւ հետեւեալ դաւանական հիմքերու վրայ, կը գրեն Հայաստանեայց Աւետարանական եկեղեցւոյ հայ գաղափարախօսները,- *«(ա) Երրորդութիւնը միայն պաշտամունքի առարկայ պիտի ըլլայ. (բ) Աւետարաններու ոգիին եւ տառին հետ չեն համաձայնիր աճիւններու, խաչի եւ պարկերներու գործածութիւնը. (գ) մարդ ի բնէ մեղանշական է եւ Աստուծոյ վերածնիչ զօրութեան կարօտ, եւ Բանին քարոզութիւնն է ազդուագոյն միջոցն, որով այդ զօրութիւնը կրնայ*

հաղորդուիլ ենթակային. (դ) Աստուածաշունչը հաւատքի եւ կեանքի միակ առաջնորդն ու կանոնն է. (ե) Քրիստոս է եկեղեցիին միակ Գլուխը, Փրկիչը եւ Բարեխօսը, եւ մեղաց քաւութեան միջոցը. (զ) փրկութիւնը հաւատքով կը գործուի եւ ոչ թէ բարի գործերով, կամ ծոմապահութեամբ, կամ ողորմութեամբ, կամ ապաշխարագինով. (է) սուրբ կեանք մը ապացոյց է փրկութեան. (ը) ճշմարիտ քրիստոնեաներու ունէ խմբակցութիւնը Յիսուս Քրիստոսի եկեղեցին կը կազմէ. (թ) խորհուրդները երկուք են՝ Մկրտութիւն եւ Հաղորդութիւն»<sup>11</sup>:

Ապտուլմէճիտ Առաջինի (1839-1861)՝ 1839թ. նոյեմբերի 3-ի հրովարտակը կը համարուի շրջադարձային ժամանակ: Ըստ հրովարտակի՝ խտրականութեան ենթարկուած ոչ մուսուլմանները պիտի ճանչցուէին իրաւահաւասար օսմանյան քաղաքացիներ: «Ֆրանսիական յեղափոխութեան նուաճումները (մարդու իրաւունքներ, դաւանանքի ազատութիւն եւ այլն) անհետեւանք չէին անցնում Օսմանեան կայսրութեան կողքով,- կը գրէ Վ. Բաումը,- եւ քրիստոնեաներու համար աստիճանաբար ազատագրուելու հնարաւորութիւններ էին ստեղծում»<sup>12</sup>:

1840-1860-ական թուականները հայ ազգային ոգիի վերածնութեան տարիներ էին: Արեւմտահայ մշակութային կեդրոններու մէջ մտաւորականութիւնը կը փորձէր ժամանակի նոր գաղափարներով ուղղութիւն տալ ազգի հոգեւոր զարգացումին: Արեւմտահայ շրջանակներու մէջ հայկական կեանքի ազատականացումի միտումներ կը ստեղծուին: Աշխարհայեացքի ու հասարակական միտքի կազմաւորումին կը նպաստէ մամուլը: «Կը պատկերացնեն ժԹ. դարու սկիզբները մոայլ, Վերածնունդի երկունքով լի: Այդ վիճակը ունէր հայ դպրոցը, այդ վիճակը ունէին հայ ժողովուրդը-երկունքի մէջ էր ազգը համայն, մանաւանդ եկեղեցին...**Հայ Դպրոցը Ոստում մը Կարարեց 1840-1860-ին՝ Մաքրուել-Սկսալ, «Փոխակերպուեցաւ 1840-1866-ին»**»<sup>13</sup>, կը նկատէ հայ աւետարանական գաղափարախօսը:

Արեւմտահայ մամուլը աննախադէպ զարգացումի հասաւ 1840-ական թուականներուն: «Որչափ դժուարին էր ի սկզբան բողոքականութեան մուտքն,

<sup>11</sup> Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցին, Պէյրութ, Հայ Տիպ Քոմփիլերաֆ-Թեքնոփրես, 1986, էջ 28, 29:

<sup>12</sup> Վիլիելմ Բաում, Թուրքիան եւ նրա քրիստոնեայ փոքրամասնութիւնները (Գերմաներէնէն թարգմանեցին՝ Դորա Սաքայեան եւ Էվելինա Մակարեան), Երևան, 2010, էջ 43:

<sup>13</sup> Ատանալեան Վեր. Կ.Պ., Յուշարձան Հայ աւետարանականաց եւ աւետարանական եկեղեցոյ, էջ 33:

նոյնչափ կը ճգնէին Ամերիկեան Միսիոնարք-իրենց սովորական կերպով-հարթել դժուարութիւնները՝ ծածկելով ամենայն ինչ գիտութեան՝ արտաքնայարդար անկեղծութեան եւ ծառայամտութեան քողին ներքեւ: Ի՞նչ աւելի կրնար իրենց սկզբունքները մուծանել տակաւին քնացող ազգի մը մէջ, եթէ ոչ յանկուցիչ՝ միանգամայն դիւրագին լրագիր մը»<sup>14</sup>, - կը նկատէ «Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը» գիրքին հեղինակը:

Այլ պարբերականներ /«Արշալոյս Արարատեան» (1840-1887), «Հայրենասէր» (1843-46), «Մասիս» (1852-1908), «Արփի Արարատեան» (1853-56)/ եւ այլն, կ'առաջադրեն ազգային լուսաւորութեան ու կրթութեան, կրօնական միասնութեան ու դասնական տարբերութիւններէ վեր դասուող ազգային համագործակցութեան գաղափարները: «Հայ ժողովուրդը յանկարծ միացաւ, աղաղակեց Ազատութիւն-ն. կորզեց Ամիրա եւ յեփադիմական եկեղեցականաց ձեռքէն 1847-ին իր ազատութիւնը: Քաղաքական ու կրօնական երկու ժողովներով սահմանադրութեան հիմնաքարը դրուեցաւ: Մամուլը, լեզուն, դպրոցը, եկեղեցին, քաղաքական ազատագրում, **զարթօնքի մեծ շարժումները իրագործուեցան...** Հոս լոկ յիշենք՝ գլխաւորն որ էր **Աւետարանական շարժումը, ազգին ծոցը ծնած**»<sup>15</sup>, - կը գրէ «Յուշարձան Հայ աւետարանականաց եւ աւետարանական եկեղեցիոյ» գրքին հեղինակը:

Հայ մամուլի պատմութեան հասարակական կարծիքի սերտաճումի այս ընթացքին (1850-1880-ական թթ.), ընկերային հակամարտութիւններու խորացումի հետեւանքով, խիստ կը սրուի գաղափարական-քաղաքական պայքարը: Մամուլը կը դառնայ հասարակական-քաղաքական ուղղութիւններու դրսեւորումի իւրայատուկ միջավայր<sup>16\*</sup>: Այս շրջանին գործունէութիւն կը ծաւալեն լուսաւորիչ-դեմոկրատներ Խ. Աբովեանը, Ս. Նազարեանը, Մ. Նալբանդեանը,

<sup>14</sup> **Գալէնքեան Գրիգորիս Վ.**, Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը, Վիեննա, 1893, էջ 39:

<sup>15</sup> **Ատանալեան Վեր. Կ.Պ.**, Յուշարձան Հայ աւետարանականաց եւ աւետարանական եկեղեցիոյ, էջ 33:

<sup>16\*</sup> XIX դարի առաջին կէսին հրատարակուած է 30, դարի երկրորդ կէսին՝ 246 անուն թերթ ու ամսագիր, ապա XX դարի սկզբին այդ թիւը հասաւ շուրջ 600-ի: Հայ պարբերական մամուլի հիմնական կեդրոններ կը դառնան Թիֆլիսը ու Կոստանդնուպոլիսը: Թիֆլիս կը հրատարակուին «Մշակ» օրաթերթը, «Մուրճ» ամսագիրը, «Նոր դար», «Փորձ», «Արձագանք» և այլ պարբերականներ: Կոստանդնուպոլիս լոյս կը տեսնէին «Մասիս», «Մեղու», «Արեւելք» օրաթերթերը: Փարիզ կը հրատարակուէին «Արեւելք» ու «Արեւմուտք» պարբերականները:

ուվքեր ծրագրած էին կրթել ու լուսաւորել հայ ժողովուրդը եւ զայն հանել դարաւոր ընդարմացումէն:

Յատկապէս Ստ.Նազարեանը կը պահանջէր եկեղեցւոյ բարեկարգում: «Հայոց եկեղեցին,- կը գրէ ան,-պիտոյ է մի ռեֆորմ առնէր ոտքից մինչեւ գլուխ, այսինքն՝ մի ազդու վերանորոգութիւն, Աւետարանի հաստարմատ հիման վրայ»<sup>17</sup>:

Բողոքական դասնանքի հրատարակութիւններու՝ ամերիկեան բողոքականներու հրատարակութիւններու՝ «Շտեմարան պիտանի գիտելեաց» (Զմիւռնիա, 1839-1854), «Աւետաբեր» (Կ. Պոլիս, 1855-1915), «Աւետաբեր մանկանց» (Կ. Պոլիս, 1908-1915) եւ այլ պարբերականներու դասնական ուղղութեան, կրթութեան ու լեզուի ասպարէզներու մէջ դաստիարակութեան հարցերու մասին Հ. Աճառեանը կը գրէ. «Առաջին անգամ լեզուի մաքրութեան վրայ ուշադրութիւն է դարձնում Զմիւռնիոյ անդրանիկ հայ թերթը՝ «Շտեմարանը», որ ամերիկեան միսիոնարների հրատարակութիւնն էր: Այսպէս, ուրեմն, բողոքական միսիոնարները դուրս են գալիս մեր մէջ իբրեւ աշխարհաբար լեզուի կանոնաւորութեան ու կոկոնելուն առաջին պատճառ. եւ նորանցից յետոյ սկսում են օրից օր շարանալ հայ թերթերը. «...աշխարհելով հետզհետէ մաքրել ու պարարաստել աշխարհիկ նոր գրական լեզուն»<sup>18</sup>:

«Աւետաբեր Շտեմարան...»-ի նպատակներէն մէկը ընդհանուր առմամբ գործնական նշանակութեան խնդիրներու լուսաբանումն է: Հանդէսը յաճախակի կը յիշեցնէ ընթերցողներուն, որ բնական երեւոյթներու ուսումնասիրութիւնը կրնայ օժանդակ միջոց ըլլալ ժողովուրդի բարեկեցութեան ապահովումին համար: Այդ առումով պակաս կարեւոր չեն նկատուիլ երկրագործութեան, զանազան բոյսերու, հողի, վայրի եւ ընտանի կենդանիներու մասին տեղեկութիւնները: Նման ակնարկներու մէջ հանդէսի հոգեւորական հեղինակները խոր ակնածանքով կ'արտայայտուին գիտնականներու մասին: Կարեւոր է նաեւ, որ ակնարկագիրները կը քննարկեն ճշգրիտ գիտելիքներ փոխանցել՝ առանց նկատի առնելու իրենց կրօնական պատկերացումները: Հայ աւետարանականները չէին կրնար չնկատել արեւմտեան երկրներու մէջ կատարուող նորամուծութիւնները: Հանդէսի ակնարկներու մէջ կը նշեն, որ գիտութեան բարգաւաճման ու անուանի գիտնականներու յայտնագործութիւններու շնորհիւ

<sup>17</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. VI, Երևան, 1966, էջ 117:

<sup>18</sup> Աճառեան Հ., Պատմութիւն Հայոց Նոր Գրականութեան, Նոր-Նախիջեան, 1912, էջ 22, 23:



եւրոպական կարգ մը երկիրներու մէջ արդէն կը զարգանայ արդիւնաբերութիւնը՝ նպաստելով մարդոց նիւթական ու հոգեւոր վերելքին: Ակնարկագիրները կը կարծեն, որ նման արդիւնաբերական շինարարութեան հետ կապուած է նաեւ հայ վաճառականութեան ապագան: Կ'առաջարկեն իւրացնել ու օգտագործել արեւմտեան գիտութեան նուաճումները, վերամշակել բերքն ու կիսաֆաբրիկատները, անոնց համար գործարաններ հիմնել:

Ըստ «Աւետաբեր Շտեմարան...»-ի՝ ազգասիրութիւնը (նոյնն է թէ հայրենասիրութիւնը) ամենեւին բնական զգացում չէ, ինչպէս ընդունուած է կարծել, այլ դաստիարակութեան խնդիր է: Հանդէսի ըմբռնմամբ դաստիարակութիւնը նախ կը նշանակէ կրթութիւն: «Աւետաբեր Շտեմարան...»-ը կրթութեան ու դաստիարակութեան մէջ կը տեսնէ ազգին փրկութեան ու կատարելագործումին ճանապարհը: Ազգային կրթութեան խնդիրը յոյժ անհրաժեշտութիւն է եւ հաստատումներու կարիք չունի: Ազգային կրթութիւն ըսելով՝ «Աւետաբեր Շտեմարան...»-ը զայն կ'ընկալէ ոչ միայն բուն իմաստով, այսինքն՝ ազգային ասանդներու վրայ հիմնուած կրթութիւնը, այլեւ համազգային, համաժողովրդական, ժամանակակից հասկացութեամբ՝ զանգուածային կրթութիւնը, որովհետեւ անհատ անձերու կրթութիւնը որքան ալ որ անհրաժեշտ, բայց բաւարար չէ, որպէսզի ազգը հասնի ընդհանուր բարեկեցութեան: Հայ աւետարանականները ընկերային, տնտեսական խնդիրներու մասնագէտներ չէին: Անոնք աստուածաբաններ էին եւ տնտեսական խնդիրներու նկատմամբ ունէին իրենց դիրքորոշումը՝ նիւթական բարիքներէն օգտուելուն տալով միմիայն բարոյական գնահատական: Եթէ կարելի է այդպէս արտայայտուիլ, անոնց «տնտեսութիւնը», անլի շուտ «փրկութեան տնտեսութիւն» էր, քան քաղաքական կամ ընկերային: Անկասկած այդ աստուածաբանական հայեացքը անոնց չի խանգարեր տեսնել աղքատութիւնը՝ որպէս աղէտ ե՛ւ հարուստներու, ե՛ւ աղքատներու համար, քանի որ շոյլ կեանքը հարուստները կը տանի բարքերու այլասերումի, իսկ աղքատութիւնը մարդոց կա՛մ կործանումի, կա՛մ իրենց ճակատագրին դէմ ընդվզումի կը տանի: «Ես միշտ ասում եմ, թէ հարստութիւնը դաւաճանաբար փոխում է նրանց, ովքեր վաւր են օգտագործում այն,- երկրորդելով Փրկիչին՝ կը գրէ չորրորդ դարու խոշորագոյն աստուածաբան սուրբ Յովհան Ոսկեբերանը,-...Երբ ինչ-որ մէկը հոգ է տանում նրա մասին, հէնց այդ ժամանակ դաւաճանաբար դաւաճանում է: Ինչո՞ւ ես այդքան հոգ տանում հարստութեան մասին, երբ այն երբեք հնարաւոր չէ պահ-

պանել: Յանկանո՞ւմ ես պահպանել այն: Ուրեմն՝ մի՛ թարցրու, այլ բաժանիր աղքատներին»<sup>19</sup>:

Ահա թէ «Աւետարեր Շտեմարան...» հանդէսը ինչպէս կը բնութագրէ 1840-1860-ական թթ. կատարուած կրօնի (Հայ աւետարանական), կրթութեան եւ դաստիարակութեան, լեզուի ու բարոյականութեան փոփոխութիւնները:

### ТЕНДЕНЦИЯ ЛИБЕРАЛИЗАЦИИ ЦЕРКВИ В СРЕДЕ ЗАПАДНО-АРМЯНСКИХ ПРОТЕСТАНТОВ

АРУТЮН СЕЛИМЯН

В первой половине XIX в. духовно-культурная переориентация шла в сторону национального самосознания армянского народа, и это ярко проявилось в патриотических настроениях духовного творчества авторов романтических того периода (М. Налбандян, Р. Патканян, С. Шаазиз). Имена этих и других авторов часто встречаются на страницах “Аветабера” (Вестник) и в переводах их произведений, или в качестве примеров в общих теоретических рассуждениях. Именно в такой религиозно-политической и литературной среде издавался “Вестник” в 40-60-ые годы XIX в., и именно поэтому журнал не мог оставаться безразличным к тем общественным настроениям, политическим событиям и общенациональным задачам, которые возникли из-за господствующего в Армении плачевного социального положения и императивных требований национально-освободительного движения.

**Ключевые слова** – национальное самосознание, религия, духовная культура, протестантская церковь, журнал “Вестник”.

### TENDENCIES TOWARD CHURCH LIBERALIZATION OF IN THE WESTERN ARMENIAN EVANGELICAL CIRCLES

HAROUTIUN SALIMIAN

The creed inclination of the protestant publications, “Shtemaran pitani giteleats”/Zmurnia, 1839-1854, “Avetaber”/ Constantinople, 1855-191”, “Awyetaber mankants”/ Constantinople, 1908-1915, and in other periodicals was towards the education and upbringing of the Armenian people and the development of the

<sup>19</sup> Սուրբ Յովհան Ոսկեբերան, Ճառերի ընտրանի (ոուսերէն թարգմ.՝ Թ. Խաչատրեանի), Ս. Էջմիածին, 2007, էջ 88, 89:

Armenian language. The major aim was to bring salvation and perfection to the nation and to promote nationalist sentiments, that is, patriotism. As claimed by "Avetaber Shtemaran ..." this conception of education designates not only traditional education but also nationwide, pan-national education that is in today's terms mass education. This signifies that the education of individuals is a necessary condition but not a sufficient one for the welfare of the whole nation. These theologians had their perspectives on economic problems as well. They judged the benefits from material goods exclusively by moral assessments.

**Key words** – Culture, Religion, Evangelical Church, National Self-Consciousness, National Education, the "Avedaper" periodical.